Հավելված N 291
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020 թվականի հունիսի 5 -ի N 253-Ա,
2021թ. ապրիլի 28-ի N 280-Ա հրամաններով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթները

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիր՝ 18-34.18-Մ2-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետը ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության մշակման աշխատանքները.
2. Իրականացնում է ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան մշակութային ժառանգության բնագավառին վերաբերվող ՀՀ ազգային զեկույցների պատրաստմանն առնչվող աշխատանքներ.
3. իրականացնում է հուշարձանների պետական հաշվառման աշխատանքների նկատմամբ հսկողություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկում է միջոցներ նոր հայտնաբերված օբյեկտների, նորահայտ հուշարձանների պահպանության ուղղությամբ.
4. Իրականացնում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի ուսումնասիրում և ներկայացնում է եզրակացություն դրանց վերաբերյալ, իրականացնում է դրանց համաձայնեցման և հաստատման գործընթացները.
5. Իրականացնում է օրենսդրությամբ սահմանված նոր հայտնաբերված օբյեկտներին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու գործընթացի կազմակերպումը.
6. Իրականացնում է կադաստրային տվյալների ձեռք բերման, գրանցման, անշարժ գույքի վկայականներ ստանալու աշխատանքները.
7. իրականացնում է պատմական բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի առաջադրանքների և նախագծերի կազմման աշխատանքները,
8. իրականացնում է հուշարձանների կադաստրի կազմման նպատակով հուշարձանների կադաստրային տվյալների ձեռք բերման, գրանցման, անշարժ գույքի վկայականներ

ստանալու աշխատանքներ.

9. իրականացնում է ՀՀ տարածական պլանավորման նախագծերի, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի ուսումնասիրություն, ապահովում է պահպանական գոտիների նախագծերը դրանցում ներառելու գործընթացը,
10. իրականացնում է ՀՀ համայնքներում իրավաբանական և ֆիզիկական անձանց օտարվող կամ հողի նպատակային նշանակության փոփոխությունների դեպքում հողատարածք-ներում պատմամշակութային հուշարձանների առկայության վերաբերյալ ուսում-նասիրություններ.
11. իրականացնում է հուշարձանների և պատմական միջավայրի անխաթար պահպանության կազմակերպման ուղղությամբ աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում տեղում կատարում է հուշարձանների պահպանվածության վիճակի մասնագիտական ուսումնասիրություն.

Իրավունքները՝

- ներկայացնելու առաջարկություն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության իրականացման մասով.
- ներկայացնելու առաջարկություն հուշարձանների օգտագործման հանձնման դիմումների կապակցությամբ.
- համապատասխան մարմիններից ստանալու համապատասխան պարզաբանումներ հուշարձանների պահպանական գոտիների սահմանման, մակերեսների, չափերի, դրանց օգտագործման պայմանակարգերի վերաբերյալ.
- համապատասխան ստորաբաժանումից ստանալու պարզաբանումներ, քարտեզագրական նյութեր և այլ անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ.
- համապատասխան մարմիններից ստանալու հուշարձանների և դրանց տարածքների գույքային գրանցման կադաստրային տվյալների վերաբերյալ տեղեկատվություն.
- Իրականացնելու համապատասխան մարմնի և նախագծային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնագիտական քննարկումներ.
- անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մարմիններից պահանջելու լրացուցիչ տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ.
- համապատասխան մարմինների հետ սահմանված կարգով քննարկելու հուշարձանների պահպանության ապահովման խնդիրները.
- առաջարկություններ ներկայացնելու հուշարձանների վնասման և քանդման դեպքերում օրենսդրությամբ նախատեսված միջոցների կիրառման վերաբերյալ.
- մասնակցելու հուշարձանների օգտագործման հանձնման գործընթացներին, բաժնի պետի հանձնարարությամբ կատարել իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդունելիություն
- համապատասխան կազմակերպություններից պահանջելու ապահովել ամբողջական տեղեկատվություն և նյութեր վերջնական կարծիք ներկայացնելու համար.
- համապատասխան մարմինների հետ սահմանված կարգով քննարկելու հուշարձանների պահպանության վիճակին առնչվող տեղեկատվությունը.
- իրականացնելու քննարկումներ համապատասխան իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ հուշարձանների օգտագործման հանձնման առաջարկությունների քննար-կումների վերաբերյալ:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության մշակման նպատակով ներկայացված նյութերը և ներկայացնել քննարկման.
- ուսումնասիրել ներկայացված տեղեկատվության ամբողջականությունը և ներկայացնել առաջարկություններ.
- ներկայացնել կարծիք նախագծային առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ.
- իրականացնել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում.
- իրականացնել բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստումը.
- ներկայացնել վերջնական կարծիք տարածական պլանավորման նախագծերի և գլխավոր հատակագծերի վերաբերյալ.
- ապահովել կարծիք հուշարձանը օգտագործման հանձնելու վերաբերյալ, մասնակցել օգտագործման հանձնման գործընթացներին:
- իրականացնել օրենսդրությամբ սահմանված նոր հայտնաբերված օբյեկտներին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու գործընթացի կազմակերպումը.
- իրականացնել պահպանական գոտիների նախագծերի վերաբերյալ կարծիքները համաձայնեցման և հաստատման ներկայացնելու գործընթացները.
- իրականացնել կադաստրային տվյալների ձեռք բերման, գրանցման, անշարժ գույքի վկայականներ ստանալու աշխատանքները.
- ներկայացնել կարծիք տարածական պլանավորման նախագծերի, համայնքների գլխավոր հատակագծերի վերաբերյալ.
- սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ներկայացնել մասնագիտական կարծիք հողաշինարարական գործերի վերաբերյալ՝ պատմամշակութային հուշարձանների առկայության մասով:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ և արվեստ
2	**Ոլորտ**	Ճարտարապետություն և շինարարություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ
3	**Ենթաոլորտ**	Ճարտարապետություն և քաղաքաշինություն	Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն	Պատմություն և հնագիտություն
4	**Մասնագիտություն**	Ճարտարապետություն		

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3.Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձ

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցաները

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցաները

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

.4. Շփումներ և ներկայացուցչություն

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծման: